ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 փետրվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

23
(2873)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ML ՄԱՅՆԻՆԳԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԴՌՆԵՐՆ Է ԸՆԿԵԼ

ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարին փոխկապակցված խոշոր շինարարական «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն տուգանվել է: ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի կողմից: Իհարկե, «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն տուգանքը վիճարկում է դատարանում, սակայն խնդիրը խոշոր գումարների է վերաբերում:

«Ժողովուրդ» օրաթերթին պաշտոնական աղբյուրներից հայտնի դարձավ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի նախկին ղեկավարին փոխկապակցված ընկերությունը պահանջում է դատարանից տեսչական մարմնի 27.12.2023 թվականի թիվ 152 ստուգման ակտը, 27.12.2023 թվականի թիվ 97 բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների /սահմանափակումների/ ստուգման ակտը եւ 27.12.2023 թվականի թիվ 152 բնապահպանական հարկով հարկման բազայի չափաքանակների /սահմանափակումների/ ակտը ամբողջությամբ վերացնել եւ որպես հետեւանք ակտին կից ներկայացված հաշվարկները, արձանագրությունը, 31.01.2024 թվականի խախտումները վերացնելու մասին թիվ 04 հանձնարարականը, ինչպես նաեւ 31.01.2024 թվականի վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին թիվ Կ/04-24-Վ որոշումը, 31.01.2024 թվականի վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու մասին թիվ Կ/05-24-Վ որոշումը անվավեր ճանաչել:

Ինչ կվճռի դատարանը՝ կհետեւենք ընթացքին, բայց արձանագրենք, որ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի շուրջ սա միակ աղմուկը չէ: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ համայնքի ղեկավարները դատարաններ են դիմում՝ ընդդեմ ընկերության: Մասնավորապես, Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Արարատ համայնքի վարչական տարածքի գյուղ Նոյակերտ բնակավայրում գտնվող հողատարածքի մրցույթն անվավեր ճանաչել, «Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցութային կարգով, 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին» 22.04.2019թ. որոշումը վերացնել, որպես հետեւանք՝ «Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին» պայմանագիրը եւ դրա հիման վրա կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչել:

Այսինքն՝ ինչ տվել են ընկերությանը, հետ են ուզում: Ի դեպ, հենց 2019 թվականի մայիսի 23-ին կառավարությունը մաքսատուրքից ազատման արտոնություն տվեց, ի թվս այլոց, նաեւ «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ին, որը փոխկապակցված է Հատուկ քննչական ծառայության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սուքիասյանի հետ: «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ն զբաղվում է ավազի եւ խճի արդյունահանմամբ: Ըստ կառավարության հիմնավորման՝ ընկերության կողմից ներմուծվող սարքավորումներն օգտագործվելու են հանքարդյունաբերության մեջ (Կոտայքի մարզ): Նկատենք, որ այս ընկերությունն առաջին անգամ չէ, որ արտոնություն է ստանում գործադիրից: 2018 թ. հունվարի 25-ին էլ «ՄԼ Մայնինգը» ստացել էր 2 մլրդ դրամի կամ 5 մլն դոլարի սարքավորումների ներմուծման մաքսատուրքի արտոնություն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը մտադիր է վարույթ հարուցել ավագանու 5 անդամների նկատմամբ, որոնք անհամատեղելիության կարգով նաեւ հանրային ծառայողի պաշտոն են զբաղեցնում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու մի շարք անդամներ ավագանու անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոններ են զբաղեցնում: Այսպես, ավագանու իշխանական անդամ Վլադիմիր Կիրակոսյանը համատեղությամբ նաեւ Անտառային կոմիտեի նախագահն է, Նատալյա Սինորյանը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականն էր, իսկ հիմա՝ ՔՊ խմբակցության փորձագետը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ավագանու անդամ Արման Բարխուդարյանը ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն է, Ջինա Չալիկյանը ԱԺ նախագահի ռեֆերենտն է, իսկ Լեւոն Լեւոնյանը նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականն է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սամվել Հակոբյանը եւս անհամատեղելիության կարգով այլ պաշտոն զբաղեցնող ավագանիների ցուցակում է. նա ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի օգնականն է: Այսպիսով, չնայած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում որոշվել էր համաներել ավագանու այս անդամներին, բայց ԿԿՀ-ն, ամեն դեպքում, վարույթ է հարուցելու ավագանու այս 5 անդամների նկատմամբ: ԿԿՀ նիստը տեղի կունենա ուրբաթ օրը, իսկ վարույթները ավագանու անդամներին կուղարկվեն 3-օրյա ժամկետում: «Օրենքով սահմանված դեպքերում մենք պարտավոր ենք վարույթ հարուցել, քանի դեռ այլ օրենսդրական կարգավորում առկա չէ»,-ասացին մեզ ԿԿՀ-ից:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարանը ծանուցում է ուղարկել Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանին որպես վկա հարցաքննելու համար: Պարզեցինք, որ Ղուկասյանը գնացել է Հակակոռուպցիոն դատարան: Հիշեցնենք, որ թաղապետը դատարան գնացել է իր ենթակաների՝ պաշտոնեական դիրքի չարաշահման գործով: Իրավապահները կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին: Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին: Նկատենք, որ նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանին այն բանի համար, թե ինչպես եղավ, որ նրա ենթակաները, առանց իր իմացության, նման պատժելի քայլի գնացին:



Ուսումնասիրելով ՀՀ արդարադատության նախարարության 2024 թվականի հունվար-փետրվար ամիսների գնումները՝ «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ, բացի խոշոր դրամաշնորհներից, ինչպիսին են «Իրավական կրթության եւ վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրած 175 մլն 211 հազար դրամ դրամաշնորհը, «Արբիտրաժի եւ հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամին տված 445 մլն 400 հազար դրամ դրամաշնորհը, նաեւ նախարարությունն այլ հետաքրքիր գնումների պայմանագրեր է կնքել: Օրինակ՝ նախարարությունը 30 հազար թելով թղթապանակ է գնել 2 մլն 214 հազար դրամ արժողությամբ: Թղթապանակի բնութագիրը, ըստ պայմանագրի, հետեւյալն է՝ թղթապանակ՝ թելով կապվող, թղթյա, նախատեսված A4 չափի թղթերի համար, ստվարաթղթի խտությունը՝ 400գ/քմ, ստվարաթղթի դիմերեսի սպիտակությունը՝ 120 (CIE համակարգով), չափսերը՝ 220x315x15մմ, դիմերեսին գրված՝ «ԹՂԹԱՊԱՆԱԿ»: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է վաճառողը: Հաջորդ հետաքրքիր գնումը 240 հազար դրամ արժողությամբ պայմանագրի միջոցով ձեռք բերված 2 դրոշներն են, որոնց մեկ հատի արժեքը կազմել է 120 հազար դրամ:

ԶՐՈՒՅՑ

ՎՏԱՆԳՈՒՄ Է ՍՅՈՒՆԻՔԸ, ՎԱՐԴԵՆԻՍԸ, ՏԱՎՈՒՇԸ...

Արցախի ԱԺ ղեկավար կազմը օրերս հանդիպել էր Արցախի հարցերով հանձնախմբի համակարգող Վարդան Օսկանյանի հետ:

Քննարկվել են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են միջազգային հիմնավոր երաշխիքների ներքո ստեղծելու անվտանգ ու իրավական դրույթներով ամրագրված միջավայր՝ արցախահայության հայրենադարձման եւ անվտանգ կյանքի համար:

ArmLur.am-ը այս առիթով զրուցել է ՀՀ առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանի հետ:

-Տիկին Ալավերդյան, գիտենք, որ հատուկ հանձնաժողով է ձեւավորվել նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի գլխավորությամբ, որը բանակցություններ է վարում եւ երաշխիքներ ձեւավորում, որպեսզի որոշ ժամանակ հետո գոնե հնարավոր լինի արցախահայերի վերադաձն իրենց հայրենիք: Ի՞նչ եք կարծում, այս գործընթացը հաջողությամբ կպսակվի՞, արդյոք Ադրբեջանից հնարավոր կլինի՞ ստանալ որեւէ երաշխիք:

-Թույլ տվեք ասել, որ ես ընդհանրապես կողմ եմ, որ ինչ-որ տարբեր գործընթացներ սկսվեն. կցանկանամ, որ հստակ մի գաղափար բոլորն ունենան ու կիսեն ինձ հետ, այն է՝ ոչ թե Արցախը եւ արցախցիները պետք է վերադառնան Արցախ, այլ Արցախը պետք է վերադարձվի հայերին. Արցախը հայկական ոչ միայն հող է, այլ եղել է հայկական հանրապետություն: Ի տարբերություն շատերի՝ ես ողջունում եմ, որ ողջ է մնացել այն ժողովուրդը, որը պետք է պայքարի: Միակ երաշխիքը հայերի՝ Արցախում ապրելու Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն է, բայց դրանից առաջ Ադրբեջանի բոլոր ցեղասպանական գործողությունները պետք է պատժվեն, պիտի գործի պատժելիության սկզբունքը: Ով անում է առանց այդ երկրորդ սկզբունքի, նա տանում է հերթական կոտորածի: Հստակեցնենք. Ադրբեջանը թույլ չի տալու, որ որեւէ հայ ապրի Արցախում որպես հայ, որպես իր ինքնությունը պահպանող: Ես փոքր-ինչ ուղղեմ. դա ոչ թե բանակցություններ են, այլ դա գործունեություն է, որը կոչված է ամենատարբեր ատյաններում, տարբեր ժողովուրդների միջավայրում ճիշտ պատկերը ներկայացնել Արցախյան հիմնահարցի: Ես պետք է փաստեմ, որ այս տարիների ընթացքում միջազգային հանրությունը, փաստորեն, սնվել է միայն սուտ մոտեցումներով , որոնք տարածում էր Ադրբեջանը: Շատ ամոթ մեզ, մենք հենց սկզբից այդ պայքարի մեջ ենք տանուլ տվել: Այս առումով այդպիսի հանձնաժողովների գլխավոր նպատակը պետք է լինի միջազգային հանրության շահագրգիռ կողմերի եւ հարթակներում ստեղծել ճիշտ պատկերը Արցախի հիմնահարցի: Ո՞րն է այդ ճիշտ պատկերը. Արցախի Հանրապետությունը կայացել է ոչ մեկին, բացի հայերից պատկանող տարածքում: Ադրբեջանի նկրտումները մերժվել են դեռ անցած դարում Ազգերի լիգայի կողմից, երբ որ ինքը ներկայացրել է իր քարտեզը՝ Բաքվից Բաթում, եւ իրեն մերժել են. որեւէ մեկը չի ճանաչել այդ սահմանները որպես օրինական: Եթե Դուք փնտրեք ինտերնետում, Դուք էլ կգտնեք այդ քարտեզը, ու Դուք կիմանաք՝ ինչ է անում այսօր Ադրբեջանը: Նա վտանգում է Սյունիքը, այդտեղից՝ Վարդենիսը, այստեղից՝ Տավուշը: Դուք կտեսնեք, որ դա հենց այն քարտեզն է, որին ինքը ձգտում է: Այսինքն՝ բոլոր այն բարձրագոչ խոսքերը, տգետ արտահայտությունները ինքնորոշման իրավունքի մասին ճշմարտության կետ չունեն: Միջազգային իրավունքը, որի հիմքով կայացել է Արցախի Հանրապետությունը, ինքնորոշման իրավունքի հիման վրա է: Ես կոչ եմ անում բոլորին. սիրելիներս, կարդացե՛ք ինքնուրույն, կարդացե՛ք, հասկացե՛ք. պետք չէ ոչ թե կրթված, այլ մտավոր կրտված մարդկանց խոսքերով ղեկավարվեք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՖՈՐՈՒՄ

ԸՆՏՐՎԵԼ Է ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

Փետրվարի 20-21-ը ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Բանգկոկում ընթացող Կայուն զարգացման Ասիա-Խաղաղօվկիանոսյան 11-րդ ֆորումի աշխատանքներին:

ԱԳՆ-ից հայտնում են, որ ֆորումի հանդիսավոր բացման արարողության ժամանակ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն ընտրվել է ֆորումի փոխնախագահ:

Նույն օրն ԱԳ նախարարի տեղակալը հանդես է եկել բանախոսությամբ «Բազմակի ճգնաժամերի շրջանում աղքատության վերացում եւ Կայուն զարգացման 2030 օրակարգի ամրապնդում. Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կայուն, դիմակայուն եւ նորարարարական լուծումների ապահովում» խորագրով բարձր մակարդակի պանելային քննարկմանը:

Իր խոսքում ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը ներկայացրել է վերջին տարիներին Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերները՝ տարածաշրջանում ստեղծված իրավիճակի, Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտման եւ Հայաստան-Ադրբեջան սահմանի անկայունության պայմաններում, որոնք լրացուցիչ խնդիրներ են ստեղծել Հայաստանի Հանրապետության կողմից կայուն զարգացման նպատակների իրագործման ճանապարհին:

Անդրադառնալով կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանի Հանրապետության առջեւ գոյացած մարտահրավերներին՝նախարարի տեղակալ Կոստանյանը կարեւորել է Փարիզի համաձայնագրի լիակատար իրագործումը, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության դեմ պայքարի ոլորտում արդյունավետ ֆինանսական մեխանիզմների կիրառումը՝ ի աջակցություն կլիմայի փոփոխության դեմ զարգացող երկրներին պայքարին:

ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը նաեւ նախագահել է ֆորումի՝ Ապագայի գագաթնաժողովին նվիրված նստաշրջանը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել գագաթնաժողովի արդյունքում ընդունվելիք Ապագայի դաշնագրին:

Ֆորումի շրջանակներում ԱԳ նախարարի տեղակալը հանդիպումներ է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական եւ սոցիալական հանձնաժողովի գործադիր քարտուղար Արմիդա Սալսիա Ալիշյահբանայի, Երիտասարդության հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի փոխտեղակալ Ֆելիպե Պոլիեի եւ Լաոսի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետության ԱԳ նախարարի տեղակալ Պոքսայ Խայխամֆիթունի հետ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՎՏԱՆԳՆ ԻՐԱԿԱՆ Է

Սյունիքում տեղի ունեցած միջադեպերը վկայում են, որ էսկալացիայի վտանգը իրական է. այս մասին Ֆրանսիայում վարչապետ Փաշինյանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ ասել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը:

«Դուք կարող եք ապավինել Ֆրանսիայի աջակցությանը Հայաստանին, անկախությանը, տարածքային ամբողջականությանը, նրա ժողովրդավարական ընթացքին եւ նրա խաղաղության ձգտումներին:

Այս պահին, երբ մենք նշում ենք Միսաք Մանուշյանի եւ կնոջ՝ Մելինե Մանուշյանի հիշատակը, պատերազմական հանցագործությունները շարունակվում են Եվրոպայի մայրցամաքում, եւ հանուն ազատության պայքարը առավել քան երբեւէ պահանջում է պայքար անպատժելիության դեմ:

Վերջերս Սյունիքում տեղի ունեցած միջադեպերը վկայում են, որ էսկալացիայի վտանգը իրական է մնում:

Ֆրանսիան ցավում է, որ փետրվարի 12-ի կրակոցի արդյունքում վիրավորվել է ադրբեջանցի, ինչն ընդունել են նաեւ Հայաստանի ղեկավարությունը՝ լիակատար թափանցիկությամբ:

Ֆրանսիան ափսոսանք է հայտնում Ադրբեջանի անհամաչափ պատասխան հարվածի համար, որի արդյունքում հայկական կողմը ունեցավ 4 զոհ եւ 1 վիրավոր»,- հավելել է Ֆրանսիայի նախագահը:

ՀՅՈՒՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ

Հայաստանում Եվրամիության քաղաքացիական առաքելությունն ի սկզբանե չի բացառել, որ Ներքին Հանդ հասնելու հետ կապված կարող են խնդիրներ լինել:

Այս մասին ասաց Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության 1-ամյա տարեդարձի շրջանակում կազմակերպված ասուլիսում՝ անդրադառնալով ադրբեջանական վերջին ագրեսիայի ժամանակ ռուս սահմանապահների կողմից ԵՄ առաքելության մուտքը Ներքին Հանդ խոչընդոտելու վերաբերյալ հարցին:

«Մեր առաքելությունը հասանելիություն ունի Հայաստանի ամբողջ տարածքում՝ բացառությամբ Ներքին Հանդի տարածքի, որը ռուս սահմանապահների պատասխանատվության ներքո է: Ի սկզբանե մենք գիտեինք, որ չեն բացառվում խնդիրները Ներքին Հանդ հասնելու համար»,-ասաց Ռիտերը:

Թե որն է ԵՄ դիտորդների մուտքը խոչընդոտելու հիմնավորումը, նա հորդորում է հարցնել ռուսական կողմին:

Առաքելության ղեկավարն ընդգծեց՝ իրենք Հայաստանում հյուրի կարգավիճակով են: «Ըստ այդմ էլ Հայաստանը պետք է զբաղվի այդ հարցով, մենք ուղղակի շփումներ չունենք Հայաստանում ռուսական ուժերի հետ»,-ասաց Ռիտերը:

Նա վստահեցրեց, որ խնդիրը կապված է բացառապես Ներքին Հանդի հետ. մնացած այն տեղերում, որտեղ իրենք հանդիպում են ռուսական ուժերի հետ, խնդիրներ չեն լինում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳ

«Հայաստանն ու Եվրամիությունն ուսումնասիրում են անվտանգության ոլորտում համագործակցելու տարբերակներ»,- այս մասին ասաց Հայաստանում Եվրոպական միության առաքելության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության 1-ամյա տարեդարձի առիթով կազմակերպված ասուլիսում՝ անդրադառնալով Հայաստան-ԵՄ հարաբերությունների ընդլայնման վերաբերյալ հարցին:

«Մենք հիմա աշխատում ենք Հայաստան-ԵՄ գործընկերության նոր օրակարգի վրա: Եվրամիության խորհուրդը Եվրահանձնաժողովին եւ բարձր ներկայացուցչին խնդրել է մշակել տարբերակներ՝ բոլոր ուղղություններով Հայաստան-ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման համար: Ընթացքի մեջ գտնվող գործընթացի մասին է խոսքը, վերաբերում է երկու կողմին էլ»,-ասաց Մարագոսը:

ԵՄ դեսպանն ասաց, որ քննարկում են, թե որն է Հայաստանի քաղաքացիների ցանկությունն այս մասով: Նա բավականին կուռ է գնահատում գործընկերությունը՝ ելնելով Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրից:

«Մենք Հայաստանի համար շատ բարեփոխումների շատ կարեւոր գործընկեր ենք հանդիսանում: Մենք նաեւ ուսումնասիրում ենք տարբերակներ անվտանգության ասպարեզում համագործակցելու: Խոսքը, մասնավորապես, Հայաստանի մասնակցության հավանականության մասին է եվրոպական խաղաղության շրջանակին»,-ասաց դեսպանը:

Նա ասաց, որ օրակարգի մշակումն ավարտելուց հետո ՀՀ-ն ու ԵՄ-ն կկարողանան հայտարարություն անել: Մարագոսը կարեւորեց, որ ԵՄ-ն արձագանքի Հայաստանի ժողովրդի հավակնություններին:

ԵՄ դիտորդական առաքելության 1-ամյա տարեդարձի առիթով կազմակերպված միջոցառմանը Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հայտնել էր, որ Հայաստանը չի ցանկանում հանդիսանալ միայն անվտանգության սպառող եւ այդ կոնտեքստում ՀՀ-ն Բրյուսելին հայտնել է, որ պատրաստ է ներդրումներ ունենալ ԵՄ ընդհանուր անվտանգության եւ պաշտպանական քաղաքականության քաղաքացիական առաքելություններում:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարի մամուլի քարտուղար Անի Բադալյանը տարածաշրջանում կայունության ապահովման գործում կարեւորել է Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության ներդրումը:

Այս մասին արտգործնախարարի խոսնակը նշել է Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործունեության մեկամյակի առթիվ X-ի միկրոբլոգում կատարած գրառման մեջ:

«Այսօր Եվրամիության գործընկերների հետ մենք նշում ենք Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության գործունեության առաջին տարեդարձը, որը Հայաստան-ԵՄ գործընկերության խորացման ամենավառ օրինակներից է: Այն ցույց է տալիս Հայաստանի, ԵՄ-ի եւ նրա անդամ երկրների փոխադարձ շահագրգռվածությունը՝ այն նոր հարթություն տեղափոխելու հավակնոտ օրակարգով: Մենք նաեւ կարեւորում ենք առաքելության կարեւոր ներդրումը տարածաշրջանում կայունության ապահովման գործում»,-գրել է Բադալյանը:

ՀՀ-ԱԴՐԲԵՋԱՆ

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՉԷ

«Սպառազինությունը, որը ձեռք է բերում Ադրբեջանը, ընդհանուր առմամբ տարածաշրջանը կայունացնելու համար չէ»,- այս մասին ճեպազրույցում հայտնեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը՝ հավելելով, որ հարցը վերաբերում է ոչ միայն Թուրքիայից, Իսրայելից, այլեւ այլ երկրներից Ադրբեջանի ձեռք բերած սպառազինությանը:

«Մենք առաջարկել ենք նաեւ ունենալ սպառազինության վերահսկման մեխանիզմներ, որովհետեւ դա կարող է տարածաշրջանում լինել կայունության ու երկարատեւ խաղաղության հաստատման գործընթաց: Մենք շարժվում ենք այդ օրակարգով: Այն օրվանից, երբ մենք հրապարակավ Ադրբեջանին փոխանցեցինք զորքերը հայելային կերպով հետ քաշելու առաջարկը, այն մշտապես մտել է մեր օրակարգ: Փորձելու ենք այդ հարցում Ադրբեջանի հետ հասնել համաձայնության՝ քննարկելով հնարավոր լուծումները: Այդ հարցում անհրաժեշտ է երկու կողմերի համաձայնությունը»,- ասաց Գրիգորյանը:

Նրա խոսքով՝ հայկական կողմը միանշանակ համոզված է, որ զորքերի հայելային հետքաշումը հնարավոր միջադեպերը կանխելու լավագույն գործիքներից մեկն է: Եթե զինված ուժերը երկուստեք դասավորվեն որոշակի հեռավորության վրա, եւ ամբողջ սահմանի երկայնքով տեղակայվեն սահմանապահ զորքերը, բնականաբար, դա կլինի կայունության գործոն:

«Հայաստանը դիվերսիֆիկացնում է իր անվտանգությունը եւ արտաքին քաղաքականությունը եւ դա կատարում է ամբողջովին բաց՝ միջոցառումների, քաղաքական մեսիջների ու գործողությունների միջոցով: Դիվերսիֆիկացիան ներառում է ոչ միայն Արեւմուտքը, այլեւ Հնդկաստանն ու մի շարք այլ երկրներ: Տեսնելով, որ անվտանգության այն համակարգը, որի մասն է կազմում Հայաստանը, չի աշխատել 2020-22 թվականներին եւ ընդհանրապես գործունյա չէ՝ մենք փնտրում ենք անվտանգության այլ երաշխիքներ եւ շարունակելու ենք աշխատել այդ ուղղությամբ»,- ասաց ՀՀ ԱԽ քարտուղարը:

«Հայկական կողմի համար առաջնահերթություն է քարտեզների միջոցով սահմանազատում եւ սահմանագծում իրականացնելը»,- հայտնեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը՝ հիշեցնելով, որ դեռեւս 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը պայմանավորվել են, որ Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը:

«Այդ հռչակագիրն արձանագրում է, որ Խորհրդային Միության հանրապետությունները ԽՍՀՄ-ի փլուզման պահին իրենց միջեւ ադմինիստրատիվ սահմանը ճանաչում են որպես միջպետական սահման, ինչը նշանակում է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյություն է ունեցել սահման, որն էլ ճանաչվել է Ալմա-Աթայի հռչակագրով: Այժմ մենք խնդիր ունենք օգտագործել պաշտոնական մարմինների կողմից հրապարակված Խորհրդային Միության վերջին տարիների քարտեզները միջպետական սահմանները վերարտադրելու նպատակով»,- նշեց Գրիգորյանը:

Ըստ քարտուղարի կարծիքով՝ դա ամբողջովին լեգիտիմ մոտեցում է, չի խախտում միջազգային որեւէ սկզբունք եւ ամբողջությամբ տեղավորվում է Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման շրջանակում, որի շուրջ հայկական կողմը ձգտում է հասնել համաձայնության:

«Քննարկումները շարունակվում են, եւ վաղ թե ուշ այդ հարցում գալու ենք համաձայնության, որովհետեւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ այլ քարտեզներ գոյություն չունեն»,- եզրափակեց Գրիգորյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՄ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ

«Հայաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը նպաստում է Հարավային Կովկասում կայունությանը եւ կարեւոր գործոն է ընթացիկ իրադարձությունների մասով թափանցիկության ապահովման համար»,- Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության 1-ամյակին նվիրված միջոցառմանն այս մասին հայտարարեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը:

Նա հիշեցրեց, որ անցած մեկ տարին կարեւոր փուլ էր ԵՄ քաղաքացիական առաքելության համար, որի ընթացքում լուծվել եւ հսկայական առաջընթաց են գրանցել մի շարք հարցեր՝ կապված առաքելության տեղակայման վայրերի, անձնակազմի համալրման եւ գործունեության իրավապայմանագրային հիմքի հետ:

«Վստահաբար կարող եմ նշել, որ այս ընթացքում մենք կատարելագործել ենք նաեւ առաքելության եւ Հայաստանի Հանրապետության գերատեսչությունների միջեւ համագործակցությունը, ձեւավորել ենք հաղորդակցության մի շարք արդյունավետ ձեւաչափեր: Առաքելությունը Հայաստանում տեղակայվել է մեզ համար դժվար ժամանակաշրջանում եւ կարեւոր գործառույթ է իրականացնումդիտարկելու Հայաստան-Ադրբեջան միջազգայնորեն ճանաչված սահմանի ողջ երկայնքով:

Մեր գնահատականն այն է, որ առաքելությունը նպաստում է տարածաշրջանի կայունությանը եւ կարեւոր գործոն է ընթացիկ իրադարձությունների մասով թափանցիկության ապահովման համար:

Մենք անընդունելի ենք համարում առաքելության հասցեին տարբեր երկրներից հնչող անհիմն քննադատությունները եւ աջակցում ենք առաքելությանը՝ իրականացնելու իր մանդատը ամբողջ ծավալով»,-ընդգծեց Գրիգորյանը:

Նա նշեց, որ այս կարեւոր առաքելությունում ներդրում ունենալու համար հայկական կողմը շնորհակալ է ԵՄ անդամ երկու տասնյակից ավելի երկրներին, Բրյուսելի ղեկավարությանը եւ առաքելության անձնակազմին:

«Մենք հուսով ենք եւ ակնկալում ենք, որ առաքելությունում կտեսնենք ԵՄ անդամ բոլոր երկրների ներկայացուցիչներին: Մենք նաեւ ողջունում ենք Կանադայի մասնակցությունն առաքելությանը եւ ողջունում ենք առաքելությանը միանալու՝ Նորվեգիայի պատրաստակամությունը»,-եզրափակեց Գրիգորյանը:

Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության հասցեին օրերս անհիմն մեղադրանքներ էր հնչեցրել Ադրբեջանի ԱԳՆ-ն՝նշելով, որ առաքելությունը ոչ թե նպաստում է Հարավային Կովկասի կայունությանը, այլ զբաղված է հակաադրբեջանական քարոզչություն իրականացնելով:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՉԱՐԱՇԱՀԵԼՈՎ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ՔԿ-ից տեղեկացնում են, որ ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ֆինչական երրորդ բաժնում իրականացված նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2019թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ներգրավվել է ընդերքօգտագործմամբ զբաղվող ՍՊ ընկերությունում իրականացվող համալիր հարկային ստուգմանը, որի ընթացքում նշված մարմնի աշխատակիցների կողմից կազմվել եւ սահմանված կարգով ՀՀ ՊԵԿ է ներկայացվել մասնագիտական եզրակացություն այն մասին, որ ՍՊ ընկերությունը թույլտվությամբ տրամադրված տարածքից դուրս տեղահանել է 40972.5 մ3 բազալտի օգտակար հանածո:

«Այնուհետեւ ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձը եւ կառուցվածքային ու գործառույթային ստորաբաժանումներից մեկի ղեկավարը, հանդիսանալով պաշտոնատար անձինք, անձնական շահագրգռվածությունից ելնելով, նպատակադրվել են Ընկերության կողմից կատարված իրավախախտումը թաքցնելու նպատակով կազմել կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթղթեր:

Մասնավորապես, ստորաբաժանման ղեկավարը հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով, իր ղեկավարի գիտությամբ եւ թույլտվությամբ, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, այն է՝ բնապահպանական վերահսկողության բացակայության պայմաններում, 2020թ. մարտին կազմել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձի անունից ՀՀ ՊԵԿ նախագահին հասցեագրված գրություն՝դրանում ներառելով կեղծ տեղեկություններ այն մասին, թե, իբր, լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 40972.5մ3 բազալտի օգտակար հանածոն, որը եզրակացության մեջ նշվել էր, որ թույլտվությամբ տրամադրված տարածքից դուրս էր արտահանվել, կարող էր բնական տեկտոնական պրոցեսների հետեւանքով առաջացած փլուզումների պատճառով թափված լիներ ՍՊԸ-ին տրամադրված տարածք: Այնուհետեւ հիշյալ գրությունը ստորագրման նպատակով ներկայացրել է տեսչական մարմնում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձին, ով էլ իր հերթին, պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառայության շահերին հակառակ, ստորագրել է այն եւ ուղարկել ՀՀ ՊԵԿ:

Ստորաբաժանման ղեկավարը, շարունակելով չարաշահել պաշտոնեական լիազորությունները, թույլտվությամբ տրամադրված հիշյալ տարածքից դուրս տեղահանված 40972.5մ3 բազալտի հանածոյի, դրանով «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման վերաբերյալ դիրքորոշում հայտնելու՝ՀՀ

ՊԵԿ նախագահի գրավոր հարցադրումներին ի պատասխան՝ բնապահպանական որեւէ տեսակի վերահսկողության բացակայության պայմաններում 2020թ. մարտին կազմել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձի անունից ՀՀ ՊԵԿ նախագահին հասցեագրված եւս մեկ գրություն՝ դրանում կրկին ներառելով կեղծ տեղեկություններ այն մասին, թե ՍՊ ընկերությունում իրականացված ստուգման շրջանակներում ընդերքօգտագործում իրականացնելու փաստ չի արձանագրվել, ուստի օրենքի պահանջի խախտում առկա չէ:

Սույն գրությունը ստորաբաժանման ղեկավարը ստորագրման նպատակով ներկայացրել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձին, ով ստորագրել է այն եւ ուղարկել ՀՀ ՊԵԿ:

Հիշյալ գրության հիման վրա ՍՊ ընկերությունում իրականացված ստուգմամբ ՀՀ ՊԵԿ-ի կողմից խախտումներ չեն արձանագրվել, կազմվել է զրոյական ակտ: Դրա հիման վրա Ընկերության կողմից իրավախախտման համար պատասխանատվության միջոց չի կիրառվել, արդյունահանված օգտակար հանածոների համար բնօգտագործման համարժեք վճարներ չեն հաշվարկվել, ինչի հետեւանքով պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 79.891.700 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ նշված երկու պաշտոնատար անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին եւ 445-րդ հոդվածի 1-ին մասին): Որպես խափանման միջոց նրանց նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան»,- ասվում է հաղորդագրությունում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ԿԱԼԱՆՔ

Ավարտվել է Նոր Հաճնի 25-ամյա բնակչի կողմից երկու անձի ծանր մարմնական վնաս պատճառելու, ինչպես նաեւ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված լինելու պարագայում բազմակի անգամ ավտոմեքենա վարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում իրականացված բազմակողմանի քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ Նոր Հաճնի 25-ամյա բնակիչը, տեղեկացված լինելով 2023թ. մարտի 3-ին կայացված որոշման մասին՝ 1 տարի ժամկետով իր՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկվելու վերաբերյալ, 2023թ. հոկտեմբերի 19-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, Նոր Հաճն քաղաքում վարելով իր «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենան, Չարենց-Թումանյան փողոցների խաչմերուկում ճանապարհը զիջելու հարցի հետ կապված հիշյալ ավտոմեքենայով ձայնային ազդանշան արձակելով, ինչպես նաեւ հեռահար լույսերը միացնել-անջատելով, կանգնեցրել է մեկ այլ՝ «Միցուբիշի Լանսեր» մակնիշի ավտոմեքենան, որի վարորդի հետ սկսել է բարձրաձայն վիճել: Լսելով նրանց ձայները՝ կից շինությունից դուրս են եկել եւ նրանց են մոտեցել մի խումբ անձինք: «Միցուբիշի Լանսեր» մակնիշի ավտոմեքենայի վարորդը հեռացել է նշված վայրից, իսկ 25-ամյա երիտասարդը կտրող-ծակող առարկայով դիտավորությամբ հարվածներ է հասցրել հիշյալ 2 տղամարդկանց՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր մարմնական վնասվածքներ: Այնուհետեւ որոշ ժամանակ անց իր վարած ավտոմեքենայով դիմել է փախուստի:

Քննությամբ պարզվել է նաեւ, որ 2023թ. մարտի 3-ի որոշմամբ զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից եւ տեղեկացված լինելով այդ մասին՝ 2023թ. մայիսից հուլիսն ընկած ժամանակահատվածում 25-ամյա երիտասարդը պարբերաբար վարել է վերոնշյալ ավտոմեքենան: Իսկ 2023թ. մայիսի 19-ին՝ Աբովյան քաղաքի Ջորավար Անդրանիկի փողոցում ավտոմեքենան վարելիս, կանգնեցվել է հիշյալ վայրում ծառայություն իրականացնող պարեկների կողմից, որի ժամանակ պարզվել է, որ երիտասարդը գտնվում է ոչ սթափ վիճակում:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 25-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (2 դրվագ), 344-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ) եւ 344-րդ հոդվածի 2-րդ մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթը՝մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՄԻՋՈՑ

ԹԻԿՆԱՋՈՐԻ ԱՆԴԱՄԸ՝ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանության ծառայողներն աղօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով բերման են ենթարկել Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանի թիկնազորի անդամներից մեկին:

Ոստիկանության բաժին տարված քաղաքացու վերաբերյալ հաղորդում եւ համապատասխան փաստաթղթեր են ներկայացվել Քննչական կոմիտե, ավելի ուշ ՔԿ է ներկայացվել նաեւ տվյալ անձը: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի եւ 396-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, իրականացվում է նախաքննություն: Քիչ առաջ ՔԿ-ից հայտնեցին,որ մեկ անձ ձերբակալված է: Նշենք,որ ձերբակալվածը Աշոտ Դանիելյանն է, որը Արցախի նախագահի անվտանգության աշխատակիցն է: Հիշեցնենք՝ երեկ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում միջադեպ էր տեղի ունեցել նշված անձի եւ 24news լրատվական ծառայության լրագրողի եւ օպերատորի միջեւ: Թիկնապահը խոչընդոտել էր լրատվամիջոցի աշխատանքը եւ հայհոյել նրանց: Ավելի ուշ Արցախի տեղեկատվական շտաբը հայտարարություն էր տարածել՝նշելով, որ Սամվել Շահրամանյանն ընդունել է լրատվամիջոցի ներկայացուցիչներին եւ դատապարտել կատարվածը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝փետրվարի 19-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 67 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՐԿ Է ՀԱՏԿԱՑՆԵԼ

Ներկայումս Գանձաքար,Կիրանց,Դովեղ գյուղերում հանրակրթական դպրոցների նոր շենքեր են կառուցվում: Նախագծային ավարտական փուլում է Նավուրի միջնակարգ մոդուլային դպրոցի շինարարության ծրագիրը: Նախագծային փուլում է Այրում քաղաքի միջնակարգ դպրոցի կառուցման ծրագիրը: Մրցութային փուլում են նաեւ Բագրատաշենի թիվ 1 եւ Արծվաբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցների շինարարության ծրագրերը, նաեւ Կոթիի միջնակարգ դպրոցի, Կողբի թիվ 1 միջնակարգ եւ Սեւքարի միջնակարգ դպրոցների շենքերի կառուցման ծրագրերը: Աղավնավանքի, Պտղավանի, Ոսկեվանի, Լուսաձորի, Նորաշենի կրթահամալիրների շենքերի կառուցումը նախատեսված է սկսել 2024թ.-ին: Տավուշի մարզպետարանից տեղեկացել ենք, որ դպրոցական նոր շենքերի ու կրթահամալիրների կառուցման համար դպրոցների հին մասնաշենքերից քանիսն է քանդվելու: Կոթիի միջնակարգ եւ Արծվաբերդի թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր շենքերի շինարարության համար նախատեսվում է այդ դպրոցների շենքերի 50 տոկոսը քանդել, սակայն 2 մասնաշենք թողնել, իսկ Այգեձորում եւ Սեւքարում դպրոցների նոր շենքերի համար նախագծով նախատեսված է դպրոցների գործող շենքերն ամբողջությամբ քանդել: Պտղավանի կրթահամալիրի կառուցման համար նախատեսված է հին շենքը 70 տոկոսով քանդել, թողնել մեկ մասնաշենք: Շինարարության նախագծով Նորաշեն գյուղի կրթահամալիրի համար ներկայումս գործող դպրոցի շենքն ամբողջությամբ քանդվելու է, Ոսկեվանի կրթահամալիրի կառուցման համար դպրոցի շենքի 50 տոկոսն է քանդվելու, սակայն 2 մասնաշենք մնալու է: Տավուշի գյուղերում դպրոցներ ու կրթահամալիրներ կառուցելու համար գործող դպրոցների կամ տվյալ գյուղի տարածքում ազատ տարածքներ կան, սակայն շինարարական նախագծերով նոր դպրոցներ, կրթահամալիրներ կառուցելու համար դպրոցների ոչ վթարային շենքերը նախատեսված է քանդել, որպեսզի դրանց տեղում նոր շենքեր կառուցեն: Ենթադրում եմ, որ դրա նպատակը դպրոցների նոր շենքերի կառուցման նախագծերի արժեքը ուռճացնելն է՝ դրանց մեջ ներառելով նաեւ քանդման աշխատանքների արժեքը: 2024 փետրվարի 13-ի դրությամբ Տավուշի մարզում բնակություն է հաստատել Արցախից բռնի տեղահանված 786 ընտանիք՝ 2810 անձ, նրանք ապրում են բնակվարձով կամ անվճար ուրիշի տներում: Դպրոցների նշված մասնաշենքերը ոչ թե պետք է քանդել, այլ շենքերի վիճակն ուսումնասիրելուց հետո դրանք վերանորոգելով կամ հիմնանորոգելով՝ տարածքները որպես բնակարան անվճար հատկացնել հայրենիք կորցրած, Տավուշում հաստատված արցախցի ընտանիքներին

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԱՎՐՈՐԱ»

ԼՈՒՅՍ ՍՓՌԵԼՈՎ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը հատուկ միջոցառումների շարք կանցկացնի 2024 թ. մայիսի 8-10-ը Լոս Անջելեսում: Միջոցառումները, այդ թվում՝ 2024 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությունը եւ Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումը, տեղի կունենան Կալիֆորնիայի համալսարանի «Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Այս մասին հաղորդագրություն է տարածել «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության գրասենյակը:

Միջոցառումները կանցկացվեն «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, Flagship Pioneering ընկերության հիմնադիր եւ գլխավոր գործադիր տնօրեն, «Մոդերնայի» համահիմնադիր եւ նախագահ Նուբար Աֆեյանի եւ Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, Վաչե եւ Թամար Մանուկյանների անվան մարսողական հիվանդությունների բաժանմունքի ղեկավար, ինչպես նաեւ «Էմմիի» անվանակարգում առաջադրված կինոպրոդյուսեր եւ ձեռներեց Էրիկ Էսրայիլյանի նախագահությամբ: Վերջինիս ջանքերի շնորհիվ 2017 թ. ստեղծվել է Կալիֆորնիայի համալսարանի «Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտը:

«Մեզ համար պատիվ է միավորել ջանքերը «Խոստում» ինստիտուտի հետ, որպեսզի աջակցենք ականավոր մարդասերներին եւ մարդու իրավունքների պաշտպաններին, որոնք վտանգում են սեփական անձը՝ այլոց օգնելու համար»,- ասաց դոկտոր Նուբար Աֆեյանը: «Անցած ութ տարիների ընթացքում «Ավրորան» ստեղծել է համախոհների համաշխարհային ցանց, որոնք նվիրված են այս կարեւոր գործին, եւ մենք ուրախությամբ սպասում ենք նրանց Լոս Անջելեսի միջոցառումներին, ինչն ավելի կբարձրացնի համայնքային ակտիվիստների ձայնն ամենուրեք եւ աշխարհին ցույց կտա յուրաքանչյուր անհատի ուժը դրական փոփոխության հասնելու գործում»:

«2024 թ. «Ավրորա» մրցանակի միջոցառումները Լոս Անջելեսում հնարավորություն կտան հյուրերին եւ մասնակիցներին իրենց երախտագիտությունը հայտնելու նրանց, ովքեր, չխնայելով սեփական անձը, օգնում են կարիքի մեջ հայտնվածներին: Հուսով ենք, որ սա կոգեւորի մարդկանց այդ երախտագիտությունը վերածելու գործի՝ միանալով մեզ եւ մաս կազմելով այս համաշխարհային շարժմանը՝ ի նպաստ համընդհանուր բարօրության»,- նշեց միջոցառումների համանախագահ Էրիկ Էսրայիլյանը: «Լույս սփռելով մարդասիրության վրա, որը հաճախ դրսեւորվում է ամենադժվարին պահին՝ մեր նպատակն է ԱՄՆ-ում եւ ամբողջ աշխարհում բարձրացնել իրազեկությունն այն սովորական մարդկանց մասին, որոնց արտասովոր քայլերի է մղում կարեկցանքի եւ արդարության զգացումը»:

2024 թ. «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի դափնեկրի անունը կհայտարարվի «Ավրորա» մրցանակի շնորհման արարողության ժամանակ: Դափնեկիր կդառնա «Ավրորայի» հերոսներից մեկը. նրանց անունները հայտնի էին դարձել 2023 թ. սեպտեմբերին: Մրցանակը տրվում է դափնեկրին՝ հնարավորություն տալով նրան շարունակելու մարդասիրության շղթան եւ աջակցելու մարդասերներին եւ կազմակերպություններին, որոնք երկրորդ հնարավորություն են տալիս կարիքի մեջ գտնվող մարդկանց:

Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումն ու մյուս միջոցառումները կհամախմբեն ոլորտի առաջատար փորձագետներին՝ ծավալելու բովանդակային քննարկում տարբեր հարցերի շուրջ՝ գենդերային արդարության, կրթության, արհեստական բանականության, կլիմայի փոփոխության, համաշխարհային առողջապահական ճգնաժամ եւ այլն:

«Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի մասին

«Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակը 1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւ է, որը շնորհվում է նրանց, ովքեր վտանգում են սեփական կյանքը, առողջությունը կամ ազատությունը՝ փրկելու այլոց կյանքը, առողջությունը կամ ազատությունը: Իր ստեղծումից ի վեր (2015 թ.) այն լույս է սփռում աշխարհի մի շարք ամենահրատապ եւ անտեսված ճգնաժամերի վրա: 2024 թ. «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի հավակնորդ 2024թ. «Ավրորայի» հերոսների անունները հայտարարվեցին 2023 թ. սեպտեմբերի 18-ին «Քլինթոն» համաշխարհային նախաձեռնության (CGI) ամենամյա միջոցառման ընթացքում Նյու Յորքում:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության մասին

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը ձգտում է լուծել մարդասիրական խնդիրներն աշխարհի տարբեր անկյուններում՝ տեղում օգնելով ամենակարիքավորներին: Նախաձեռնությունն ունի հայկական պատմական արմատներ, քանի որ այն ստեղծվել է Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկողների, ձգտելով վերափոխել այս փորձառությունը համաշխարհային շարժման:

«Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտի մասին

«Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտը Կալիֆորնիայի համալսարանի իրավաբանության դպրոցում գործող մարդու իրավունքներին ուղղված կրթության, հետազոտության եւ ազդեցության նորարարական կենտրոն է: Կիրառելով Լոս Անջելեսի ստեղծարար եւ դինամիկ մոտեցումները՝ մենք ձգտում ենք վերամաստավորել մարդու իրավունքների ներուժը՝ հաղթահարելու մեր ժամանակի ամենահրատապ որոշ խնդիրներ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

56 ԱՌԱՐԿԱ

ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԻ ԳԱՆՁԵՐԸ

Օհանավանում վերջերս հայտնաբերված միջնադարյան ժայռափոր դամբարանի գանձերը համարակալվում, մաքրվում են: Այս մասին հայտնում են «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ից:

Հնագիտական 56 առարկա նախ հանձնվել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին: Համարակալվելուց եւ հաշվառվելուց հետո առարկաները տեղափոխվել են Թանգարանային առարկաների վերականգնման լաբորատորիա:

Այս պահին իրականացվում են մաքրման աշխատանքներ: Գտածոները հիմնականում ձիթաճրագներ են եւ թվագրվում են IV-V դդ.: Հիշեցնենք՝ փետրվարի 15-ին ԿԳՄՍ նախարարությունից հայտնել էին, որ Օհանավանի տարածքում՝ Քասախի կիրճում, բնակիչներից մեկը սեփական տարածքում հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերել է միջնադարյան ժայռափոր դամբարան: «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ից հայտնել էին, որ Օհանավանում հայտնաբերված միջնադարյան ժայռափոր դամբարանում առաջիկայում կիրականացվեն հնագիտական աշխատանքներ, հուշարձանը կվկայագրվի եւ կներառվի նորահայտ հուշարձանների ցանկում:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 4 պատահար. 5 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՊՐԵՄԻԵՐԱ

«ԱՐԱՐԱՏ ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ»

Հայ-Ռուսական համալսարանում տեղի ունեցավ հայտնի լրագրող եւ ռեժիսոր Աշոտ Ջազոյանի ««Արարատ սարի լանջին» վավերագրական ֆիլմի պրեմիերան:

«Ֆիլմը մի քանի ամիսների ընթացքում կատարված մեծ աշխատանքի եւ անցյալ տարվա աշնանը ՀՌՀ հարթակում անցկացված «Ռուսաստան-Հայաստան. գործընկերություն՝ հանուն ապագայի» մեդիա ասամբլեայի արդյունքն է: Աշոտ Ջազոյանը հսկայական ներդրում ունի ռուս-հայկական հարաբերությունների զարգացման գործում: Իսկ այսօր, երբ նշում ենք Մայրենի լեզվի օրը, եւ Հայրենիքի պաշտպանի օրվան ընդառաջ՝ մենք դիտում ենք համատեղ ստեղծված այս վավերագրական ֆիլմը՝ՀՌՀ ուսանողների եւ դասախոսների մասնակցությամբ: Սա պետք է վերածենք ազգային եւ ռուս-հայկական հարստության»,- նշեց ՀՌՀ ռեկտոր, ՀՀ եւ ՌԴ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդվարդ Սանդոյանը:

Իր հերթին Աշոտ Ջազոյանն ընդգծեց, որ սա Ռուսաստանի եւ Հայաստանի երիտասարդ լրագրողների առաջին եւ եզակի համատեղ նախագիծն է: Ֆիլմը նվիրված է երկու ժողովուրդների հարաբերությունների մետաֆիզիկային:

«Մենք 60 հոգուց բաղկացած հիանալի թիմ ունեինք: Դա միջազգային, ռուս-հայկական խումբ էր, եւ մի քանի օր մասնակիցները միասին պատմություններ էին կերտում Հայաստանի բնակիչների մասին: Անչափ շնորհակալ եմ համալսարանին, որը ոչ միայն օգնեց կազմակերպմանը, այլեւ ապահովեց ամենակարեւորը. ՀՌՀ ուսանողները նկարահանեցին տարբեր պատմություններ՝ օգնելով իրենց ռուս գործընկերներին ճանաչել երկիրը»,- ասաց Ջազոյանը:

ՀՌՀ ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Մարինա Ալեքյանը նշեց, որ այս նախագիծը մի քանի մասնագիտությունների ուսանողներին հնարավորություն է տվել ոչ միայն կատարելագործել իրենց մասնագիտական հմտությունները, այլ նաեւ բերել նրանց իրական մշակութային համագործակցության դաշտ, զգալ ոչ թե խոսքերով, այլ գործնականում հայ-ռուսական դարավոր բարեկամության ոգին:

Ֆիլմի ցուցադրության ավարտին Հայաստանում ՌԴ դեսպանատան խորհրդական եւ բանագնաց Մաքսիմ Սելեզնեւը նշեց. «Կարծում եմ, որ նման ֆիլմերը պետք է ցուցադրվեն ոչ միայն լայն էկրանով, այլ նաեւ կենտրոնական հեռուստաալիքներով: Պետք է տարեցտարի ավանդույթ դարձնել նման ցուցադրությունները, որպեսզի ստանանք «Արարատ սարի լանջին» ֆիլմաշար: Դրանք կդառնան յուրօրինակ տարեկան հաշվետվություն, թե ինչպես է փոխվում Հայաստանը»:

Հիշեցնենք՝ «Արարատ սարի լանջին» վավերագրական ֆիլմը ստեղծվել է Հայաստանի եւ Ռուսաստանի 60 երիտասարդ լրագրողների եւ լուսանկարիչների մասնակցությամբ (տեւողությունը՝ 39 րոպե): Ֆիլմը իր ամբողջական դրամատուրգիայով ամփոփել է 20-ից ավելի 1,5 րոպեանոց տեսանյութ:

Փետրվարի 28-ին տեղի կունենա ֆիլմի շնորհանդեսը նաեւ Մոսկվայի «Կոսմոս» կինոթատրոնում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության եւ ԿԳՄՍ նախարարների համատեղ ստորագրած պատշոնական հրամանով կներդրվի հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր:

Այն գործելու է բժշկական կրթության ոլորտում կլինիկական օրդինատուրայի հենքի վրա: Ծրագրի ակադեմիական գործընկերներն են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտն ու ԵՊԲՀ-ն, իսկ միջազգային գործընկերը՝ Լոս Անջելեսի մանկական հիվանդանոցը: Ծրագիրը ստեղծվել է «Հենար» բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ:

Ծրագրի հիմնական կլինիկական գործընկերներն են «Արաբկիր» բժշկական համալիրը, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիրն ու «Ուիգմոր» կանանց եւ երեխաների հիվանդանոցը:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն ընդգծեց, որ ծրագիրը նպատակ ունի միավորել երկրում առկա լավագույն ակադեմիական եւ կլինիկական ռեսուրսները հետբուհական բժշկական կրթության ոլորտում, ինչպես նաեւ համագործակցել միջազգային գործընկերների հետ՝ ստանալու նորարարական, ռեզիդենտակենտրոն ծրագիր՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա: Այս ծրագիրը ռեզիդենտներին տալու է ընդգրկուն, բազմազան եւ համապարփակ կրթություն:

«Այս ձեռքբերման հիմքում ընկած է բավական մեծ աշխատանք: Ես շնորհավորում եմ այս կարեւոր համագործակցության, նաեւ գրանցված այն արդյունքի համար, որը հետագայում թե՛ կրթական, թե՛ առողջապահական ոլորտում լուրջ բարեփոխումների հիմք է ծառայելու: Հայաստանի զարգացման եւ ձեռքբերումների համար չափազանց կարեւոր է տարբեր գերատեսչությունների, նախարարությունների ու նաեւ բուհական համակարգի ակտիվ համագործակցությունը: Ուրախ եմ, որ մենք այսօր արդեն իսկ իրականացնում ենք պիլոտային ծրագիրը, որը մեզ հնարավորություն կտա օգտագործելով եւ վերցնելով մեր միջազգային գործընկերների շատ կարեւոր փորձը՝ ձեւավորել այն կառուցակարգերը, որի շրջանակներում հետագայում կվերանայենք եւ կմեկնարկենք մեր մյուս ծրագրերը»,- ասաց Ավանեսյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն էլ, անդրադառնալով իրականացվող փոփոխություններին, ընդգծեց, որ դրանց անհրաժեշտությունն այս պահին կա թե՛ կրթության, թե՛ առողջապահության ոլորտներում:

«Ուրախ եմ, որ միջգերատեսչական համագործակցությունը, որը դեռեւս բարելավվելու անհրաժեշտություն ունի, կյանքի կոչվեց: Կարեւորում եմ այն փաստը, որ այն իրականացվում է որպես փորձնական ծրագիր, որովհետեւ սա մի ուղղություն է, որտեղ մենք կարիք ունենք հասկանալու լավագույն ճանապարհները, փորձելու դրանք եւ այդ փորձի հիման վրա նաեւ տեսնելու, թե ինչպիսին պետք է լինի համակարգային փոփոխությունը»,- նշեց նախարարը:

Հետբուհական մասնագիտական կրթական ծրագիրը գործում է Առողջապահության նախարարության նպատակային օրդինատուրայի ծրագրի շրջանակներում: Այն մեկնարկել է 2023 թ.-ի հոկտեմբերի 9-ին, ունի մրցութային կարգով ընդգրկված 8 սան, ովքեր ընդունվել են Երեւանի պետական բժշկական համալսարանի եւ Առողջապահության ազգային ինստիտուտի միջոցով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Ներսիսյան թաղամաս, 2 շենք, 8 հասցեում գտնվող 61,67 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9070000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 11.03.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 11.04.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲԵՍԹՍԵԼԵՐ»

ԿԱՊՈՂ ՕՂԱԿ՝ ԳՐՔԻ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ

«Արմենպրես» պետական լրատվական գործակալությունն ավելի քան տասը տարի իրականացնում է «Երեւանյան բեսթսելեր» հատուկ նախագիծը, որի շնորհիվ ամրապնդվում է գրողների, գրահրատարակիչների, ընթերցողների միջեւ կապը: Նախագծի շնորհիվ ընթերցասեր հանրությունը հնարավորություն է ունենում ծանոթանալու նոր հրատարակություններին, նոր թարգմանություններին, երիտասարդ գրողների ստեղծագործություններին:

«Արմենպրես»-ի տնօրեն Նարինե Նազարյանն ընդգծեց, որ նախագիծը գործակալության համար կարեւոր նշանակություն ունի, եւ արդեն մի քանի տարի մրցանակաբաշխությամբ արդյունքներն ամփոփվում են Մայրենի լեզվի խորհրդանշական օրը՝ փետրվարի 21-ին: Միջոցառումն այս տարի անցկացվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտում:

«Նախագիծը նպատակ ունի յուրահատուկ կապող օղակ հանդիսանալ գրողների, հրատարակիչների, ընթերցողների, գրախանութների միջեւ, ընթերցողներին իրազեկել համաշխարհային եւ հայաստանյան արդի գրական միտումների, ամենապահանջված գրքերի մասին, ամրապնդել գրքի նկատմամբ սերն ու ընթերցելը դարձնել վարակիչ»,-շեշտեց Նազարյանն ու հայտարարեց անվանակարգերը:

«Տարվա ամենապահանջված թարգմանություններ» անվանակարգում մրցանակը տրվեց թարգմանիչ Մարիա Սադոյանին՝ Խալեդ Հոսեյնիի գրքերի հայերեն թարգմանությունների՝ «Երեւանյան բեսթսելեր» հատուկ նախագծում տարվա բեսթսելեր ճանաչվելու համար («Զանգակ» հրատարակչություն):

«Տարվա բեսթսելլերների թարգմանիչ» անվանակարգում մրցանակի արժանացավ Աստղիկ Աթաբեկյանը՝ «Երեւանյան բեսթսելեր» հատուկ նախագծում Ալեքս Մայքլիդիսի «Լռակյաց հիվանդը»եւ Քարեն Մակմանուսի «Մեզնից մեկը ստում է» գրքերի՝ բեսթսելեր ճանաչվելու համար («Newmag» հրատարակչություն):

«Տարվա ամենապահանջված թարգմանությունների հրատարակիչ» անվանակարգում մրցանակ ստացավ «Էդիթ պրինտ»-ը՝ Ագաթա Քրիստիի գործերի՝ «Երեւանյան բեսթսելեր» հատուկ նախագծում տարվա բեսթսելեր ճանաչվելու համար:

Հրատարակչության հիմնադիր նախագահ Մկրտիչ Կարապետյանը շնորհակալություն հայտնեց «Արմենպրես»-ին նման նախագիծ իրականացնելու համար՝ նշելով, որ եւ՛ ընթերցողներն են ոգեւորվում, եւ՛ գրախանութները: «Մենք չենք հասցնում տպագրել Ագաթա Քրիստիի գրքերը, քանի որ դրանք շատ պահանջված են: Արդեն 30 հատոր կա, հետո հաջորդ տասը հատորը կլինի, ավելի ուշ՝ հաջորդ հատորները: Մենք նաեւ այլ հետաքրքիր հեղինակների ենք հրատարակում եւ ուրախ ենք, որ մեր ընթերցողները գոհ են»,- ասաց նա:

«Տարվա մանկապատանեկան գրքերի հրատարակիչ» անվանակարգում մրցանակը տրվեց «Բուկինիստ» հրատարակչությանը՝ «Արմենպրես»-ի «Երեւանյան բեսթսելեր» հատուկ նախագծում մանկական ամենաբազմատեսակ գրքերով ներկայացված լինելու համար:

«Բուկինիստ»-ի տնօրեն Խաչիկ Վարդանյանը հավաստիացրեց՝ եթե մրցանակ հանձնվեր «Գրքին սատարող հիմնարկ» անվանակարգում, «Արմենպրես»-ն ամեն տարի կարող էր ստանալ այդ մրցանակը: Նա հայտնեց հրատարակչության պատրաստակամությունը՝ շարունակելու երեխաներին կրթող նոր գրքերի լույսընծայումը՝ կարեւորելով հանրագիտարանների շարքի տպագրությունը, որը կյանք է ստացել ավելի քան 10 տարվա անդադար աշխատանքի արդյունքում:

«Տարվա բեսթսելլերների հրատարակիչ» անվանակարգում մրցանակ ստացավ «ԴաՎինչի» հրատարակչությունը՝ նոն ֆիքշն (փաստավավերագրական) ժանրում Ջոն Ստրելեքի գրքերի՝ տարվա բեսթսելեր ճանաչվելու համար:

«ԴաՎինչի» հրատարակչության տնօրեն Հայկ Աջապահյանը մրցանակն անսպասելի համարեց՝նշելով, որ որեւէ գիրք տպագրության համար դիտարկում են, եթե դուր է գալիս իրեն ու իր թիմին, սակայն նախագիծը եւ մրցանակը փաստում են, որ դրանք դուր են գալիս նաեւ գնորդին: «Դա նշանակում է, որ գտել ենք ընթերցողին բավարարելու նշաձողը»,- ընդգծեց նա:

«Տարվա հայ հեղինակ» անվանակարգում մրցանակի արժանացավ Աշոտ Աղաբաբյանը՝անդադրում աշխատանքի, անսպառ ստեղծագործականության եւ մի քանի գրքով տարվա բեսթսելեր ճանաչվելու կապակցությամբ:

Նարինե Նազարյանն ընդգծեց, որ հեղինակն ունի մոտ մեկ տասնյակ ստեղծագործություններ, որոնցից դժվարանում է առանձնացնել որեւէ մեկը, քանի որ յուրաքանչյուրը յուրօրինակ կերպով ներկայացնում է հայ ժողովրդի հերոս զավակների գործունեությունը:

Աղաբաբյանը շնորհակալություն հայտնեց «Բուկինիստ» հրատարակչությանը՝մշտապես իր կողքին լինելու եւ իր գործերն ընթերցողների հնարավորինս լայն լսարանի հասանելի դարձնելու գործում:

ՀՈՒՌԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՑՈՒՑԱԴՐՎՈՒՄ ԵՆ

ՀԱՅ ԿԻՆՈՅԻ 100–ԱՄՅԱԿ

Հայ կինոյի 100-ամյակի շրջանակում Բրյուսելի Սինեմատեկում ցուցադրվում են նշանավոր կինոռեժիսոր, սցենարիստ, կինոդերասան, «Հայֆիլմ» կինոստուդիայի հիմնադիր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Համո Բեկնազարյանի մի քանի ֆիլմեր:

Այս մասին հիշեցնում է Հայաստանի ազգային կինոկենտրոնն ու տեղեկացնում, որ փետրվարի 20-ին եւ 27-ին Սինեմատեկում ցուցադրվելու է հեղինակի՝ 1930 թվականին նկարահանած «Երկիր Նաիրի» ֆիլմը:

Կինոնկարը նվիրված է Հայաստանում խորհրդային իշխանության 10-ամյակին: Խորհրդային Միությունում մինչեւ Ձիգա Վերտովը վավերագրական կինոն ուներ գլխավորապես փաստագրական բնույթ, ինչը բնորոշ էր նաեւ հայկական վավերագրական կինոյին: Հայկական առաջին «վավերագրական» ֆիլմերը հեղինակել է Համո Բեկնազարյանը: Նա օպերատոր Ա. Յակովլեւի հետ արձանագրել է Գյումրիի երկրաշարժի հետեւանքները (1926թ.), իսկ 1930-ին նրանք նկարել են «Երկիր Նաիրի» գեղարվեստա-վավերագրական լիամետրաժ կինոնկարը: Իր ձեւաչափով այս ֆիլմը կատարելապես նոր երեւույթ էր հայկական կինոյում:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Հայաստանի ծանրամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի նորընծա չեմպիոն Վարազդատ Լալայանը իր չեմպիոնությունը կարեւոր գործոն է համարում դեպի Օլիմպիական խաղեր տանող ճանապարհին:

«Մենք չգիտեինք, որ Լաշան (խմբ. Վրաստանի ծանրամարտի հավաքականի անդամ, օլիմպիական կրկնակի, Եվրոպայի ու աշխարհի 7-ակի չեմպիոն Լաշա Տալախաձե) չի մասնակցելու Եվրոպայի առաջնությանը: Դա միայն ընթացքում պարզ դարձավ: Ես պատրաստ էի այս մրցումներին: Ես պատրաստ էի հաղթանակի: Շատ ոգեւորված եմ: 3-4 տարի Եվրոպայի առաջնություններում մեդալներ ունեցել եմ, բայց այս չեմպիոնությունը սպասված էր: Մեծահասակների շարքում առաջին չեմպիոնությունս է: Ինձ համար սա շատ տպավորիչ է, ես շատ ուրախ եմ»,- ասաց Լալայանը: Խոսելով Պոկում վարժությունում իր գրանցած արդյունքից՝ Լալայանն առանձնացրեց, որ այս ձեւում մոտեցումներն այդքան էլ լավ չստացվեցին, բայց հավելեց, որ Հրում վարժությունում երկու մոտեցումները բավարար էին հաղթելու համար:

«Հիմա ամեն ինչ տանում է դեպի Օլիմպիական խաղեր, ամեն ինչ նպաստում է դրան: Օլիմպիական խաղերին առավել լավ պետք է պատրաստվենք, որ ավելի լավ ու վստահ ներկայացնենք մեր երկիրը»,-ընդգծեց նա:

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող ծանրամարտի Եվրոպայի առաջնությունը մոտեցավ ավարտին: Մրցումային վերջին՝ 9-րդ օրը պայքարի մեջ մտան գերծանր քաշային ծանրորդները: Ծանրամարտի աշխարհի եւ Եվրոպայի 7-ակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի կրկնակի ոսկե մեդալակիր Լաշա Տալախաձեն հրաժարվեց մրցումից:

Հայաստանի ընտրանու անդամ Վարազդատ Լալայանը Պոկում վարժությունում գլխավերեւում պահեց 200 եւ 205 կգ: Նա ոսկե մեդալ նվաճեց այս ձեւում: Հրում վարժությունում նա բարձրացրեց 250 կգ եւ դարձավ փոքր ոսկե մեդալակիր: Երկամարտի 455 կգ արդյունքով Վարազդատ Լալայանը դարձավ Եվրոպայի չեմպիոն: Այս քաշային կարգում արծաթե մեդալ նվաճեց Հայաստանի հավաքականի անդամ Սիմոն Մարտիրոսյանը:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացան «Ինտեր»-«Ատլետիկո», «ՊՍԺ»-«Բորուսիա» հանդիպումները:

«Ինտեր»-ը, սեփական հարկի տակ ընդունելով Մադրիդի «Ատլետիկո»-ին, առավելության հասավ նվազագույն հաշվով:

Միլանյան ակումբի կազմում միակ գնդակը խփեց Մարկո Արնաուտովիչը խաղի 79-րդ րոպեին: Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 73-րդ րոպեին:

Օրվա մյուս խաղում Դորտմունդի «Բորուսիա»-ն հյուրընկալվեց «ՊՍԺ»-ին: Այդ հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝1:1 հաշվով: «ՊՍԺ»-ից աչքի ընկավ Լյուկ դե Յոնգը, իսկ «Բորուսիա»-ի գոլը հեղինակեց Դոնիել Մալեն:

Այս թիմերի պատասխան հանդիպումները կկայանան մարտի 13-ին:

● Փետրվարի 26-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Երգեհոնային երաժշտության համերգ»-ը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը վճարվել լիազորագրով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչ ժամկետում է վճարվում չվճարված կենսաթոշակի գումարը:

Արուսյակ Հովակիմյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կենսաթոշակը վճարվում է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում, նաեւ այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով: Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակառուն ներկայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե գործուղման դեմքում գիշերավարձի գումարը փաստաթղթով հիմնավորված չէ, ապա տվյալ գումարը ենթակա՞ է նվազեցման գործուղման մեկնած ֆիզիկական անձի համախառն եկամտից:

Լիաննա Իսրայելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի եւ 16 ապրիլի 2001թ. N 02/456 հրամանի 12.2.-ի համաձայն՝ փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ չափերով տրվող փոխհատուցումները, մասնավորապես՝ գործուղման վճարները:

Համախառն եկամտից նվազեցվում են ՀՀ տարածքում եւ ԼՂՀ գործուղվելու դեպքում ոչ պետական եւ ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար ՀՀ կառավարության 29.12. 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի եւ ճանապարհածախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի եւ ճանապարհածախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Օտարերկրյա գործուղումների դեպքում գիշերավարձի փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը փոխհատուցվում են նշված որոշմամբ տվյալ երկրի համար սահմանված գիշերավարձի նվազագույն նորմայի 70% սահմաններում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Գազպրոմ Արմենիա» ընկերության աշխատողները ավելի քան 500 գիրք նվիրեցին Հայաստանում Ռուսական տանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 7	+ 2 + 7
Կոտայքի լեռներ	- 2 - 5	+ 3 + 6
Կոտայքի նախալեռներ	0 + 2	+ 9 + 11
Գեղարքունիք	- 2 - 6	+ 2 + 5
Լոռի	- 2 - 5	+ 4 + 8
Տավուշ	0 - 4	+ 3 + 7
Արագածոտնի լեռներ	- 2 - 5	+ 2 + 5
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7	+ 8 + 12
Արարատ	+ 2 + 5	+12 + 14
Արմավիր	+ 2 + 4	+13 + 15
Վայոց ձորի լեռներ	- 2 - 5	+ 2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4	+12 + 14
Սյունիքի հովիտներ	+ 2 + 4	+11 + 14
Սյունիքի նախալեռներ	0 - 4	+ 7 + 11
ԼՂՀ	0 - 3	+ 7 + 10
Երեւան	+ 7 + 9	+11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*